## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԲԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ (N 32-100-14, 12.02.2009թ.) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Մերժել «Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասությամբ ձեւակերպված դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով զեկուցողին (ՍԴ անդամ Կ. Բալայան) առնչվող միջնորդությունը՝ ակնհայտ անհիմն լինելու պատճառով, հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանն անդրադարձել է փվյալ խնդրին եւ դրա վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտել է ՀՀ սահմանադրական դատարանի 30.01.2009թ. ՍԴԱՈ-7 աշխատակարգային որոշմամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

24 փետրվարի 2009 թվականի
ՍԴԱՈ -13